

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՅՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

15.05.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանն այցելել է <<Հրազդանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ:

Կոտայքի մարզպետը շրջել է Հրազդանի բժշկական կենտրոնի տարածքում, ծանոթացել առողջապահական հաստատության աշխատանքային պայմաններին, զրուցել բուժաշխատողների հետ, ծանոթացել վերջիններիս կողմից իրականացվող մասնագիտական գործունեության հիմնական ուղղություններին:

Հրազդանի բժշկական կենտրոնում Կոտայքի մարզպետը զրուցել է նաև քաղաքացիների հետ, լսել նրանց կարծիքներն ու տեսակետները բուժսպասարկման վերաբերյալ:

Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանն այցելության ավարտին հանդիպում է ունեցել Հրազդանի բժշկական կենտրոնի աշխատակիցների հետ:

<<Հրազդանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում Կոտայքի մարզպետին ներկայացվել են մանրամասներ ընթացիկ գործունեության և առաջիկա ծրագրերի վերաբերյալ՝ անդրադարձ կատարելով ընկերության գլոբալ բյուջեի համամասնություններին (տարեկան շուրջ 611 մլն դրամ), պետական պատվերի ծավալներին, վճարովի ծառայություններից գոյացող միջոցներին (տարեկան շուրջ 80 մլն դրամ), ծնունդների թվին (տարեկան շուրջ 1000 ծնունդ) բժշկական և միջին բուժ.անձնակազմի վարձատրությանն ու այլ հարցերի ևս:

Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանն իր խոսքում նկատել է, որ պետական հոգածության արդյունքում նմանատիպ կահավորանքով և տեխնիկական հագեցվածությամբ ապահովված բուժհաստատությունը պետք է կազմակերպի օրինակելի աշխատանք, որը կնպաստի ինչպես Հրազդան քաղաքի, այնպես էլ հարակից համայնքների բնակչության բուժսպասարկման պատշաճ կազմակերպմանը:

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանը լսել է բուժաշխատողների կողմից բարձրացվող խնդիրներն ու տվել կոնկրետ հանձնարարականներ կազմակերպության արդյունավետ գործունեության ուղղությամբ՝ խնդիր դնելով ապահովել պետական պատվերի շրջանակներում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման լիարժեքությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ հատկապես պետական պատվերը կազմում է ընկերության կողմից իրականացվող առողջապահական գործունեության շուրջ 80-85 տոկոսը: